ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/42

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Մասնակից՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով գնանշման հարցում, ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 05.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1385-2020 գրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **Գործի նախապատմությունը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 17.01.2020թ.-ի թիվ ՀՎ/32/1219-2020 գրության հիման վրա, 20.01.2020թ.-ին թիվ 26/26-1/544-2020 գրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձը 21.01.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/1338-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է առաջարկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տալ տեղեկատվություն վերոնշյալ գրությամբ առկա անհամապատասխանությունների վերաբերյալ՝ հստակեցնելով դրանք:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.01.2020թ.-ին թիվ 01.1/26-1/903-2020 գրությամբ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ խնդրելով տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 03.02.2020թ.-ին ներկայացվել է պահանջվող տեղեկատվության շտկված տարբերակը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 03.02.2020թ.-ի թիվ ՀԲ/32/2614-2020 գրությամբ շտկված տեղեկատվության տարբերակը Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) է ներկայացրել 05.02.2020թ.-ին թիվ 26/26-1/1385-2020 գրությամբ:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 10.02.2020թ.-ի թիվ 33-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2019-2020թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի քննությունը 10.02.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

12.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված

ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/42 համարի ծածկագիրը և 19.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 19.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.03.2020թ.-ին:

2. <u>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 03.02.2020թ.-ի թիվ ՀԲ/32/2614-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին՝ Ֆոր էյ Քնսալթինգ ՓԲԸ-ին, 18 դեկտեմբերի 2019-ին ծանուցվել է պայմանգիր կնքելու առաջարկ: Սակայն սահմանված ժամկետում մասնակցի կողմից պատվիրատուին չի ներկայցվել կնքված պայմանգիրը երկու օրինակից, պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովումը:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 12.02.2020թ. գրությամբ դիմել է «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1385-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը 04.03.2020թ.-ին ներկայացրած դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել՝ «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին ճանաչել ընթացակարգի ընտրված մասնակից, որին անգործության ավարտից հետո կառաջարկվի կնքել պայմանագիր:

Այնուհետև, «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմքով, որ Ընկերությունը 18.12.2019թ. ստանալով պայմանագիր կնքելու առաջարկ՝ սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագիրը երկու օրինակից, պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովումը:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ աստեղ առկա են գնահատող հանձնաժողովի կողմից թույլ տված մի շարք խախտումներ, որոնք ոչ իրավաչափորեն հանգեցրել են տվյալ մասնակցի համար գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգ: Մասնավորապես.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է այն հիմքով, որ Ընկերությունը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, այն է՝ պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին ներկայացրել պայմանագրի ապահովումը և որակավորման ապահովումը:

Տվյալ պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները.

Ընթացակարգի հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» բաժնի 3-րդ կետով սահմանվել է հետևյալը՝ ՀՀ հանրային հատվածի կազմակերպության համակարգում գործում են թվով 47 առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումներ:

Վերը նշված կետի վերաբերյալ, մասնավորապես առանձնացված ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն 24.12.2019թ. գրություն է ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, որով մասնավորապես հայտնել է՝

«Ի պատասխան Ձեր 18.12.2019թ. գրությանը կից ներկայացված պայմանագրի նախագծին (այսուհետ՝ Պայմանագիր), հայտնում ենք հետևյալը.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. 165-Ն «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» հրամանի 5-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը սահմանում են.

1) բաժնետոմսերի հիսուն տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ այն կազմակերպություններում, որոնց նախորդ տարվա շրջանառությունը

կամ համախառն եկամուտը գերազանցել է 2 միլիարդ ՀՀ դրամը, բաժնետոմսերի կառավարման լիազորություն-ներն իրականացնող պետական կառավարման մարմնի ղեկավարը, իսկ համայնքներում՝ համայնքի ղեկավարը, պետք է ապահովի ներքին աուդիտի ստորաբաժանման առնվազն մեկ աշխատակցի գործուղված լինելը նշված կազմակերպություն,

2) պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, որոնց ընթացիկ տարվա նախահաշվի ընթացիկ ծախսերը գերազանցում են 2 միլիարդ ՀՀ դրամը կամ աշխատակիցների (ներառյալ պայմանագրային հիմունքներով) թվաքանակը գերազանցում է 200-ը, ընդհանուր կառավարումն իրականացնող համապատասխան լիազորված պետական մարմնի ղեկավարը, իսկ համայնքներում՝ համայնքի ղեկավարը, պետք է ապահովի ներքին աուդիտի առնվազն մեկ աշխատակցի գործուղված լինելը նշված կազմակերպություն:

Պայմանագրի տեխնիկական բնութագրեր-գնման ժամանակացույց բաժնի 3-րդ կետում (այլ տեղեկություններ) ինչպես նաև «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով հայտարարված մրցույթի հայտում նշված է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության թվով 47 առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումները, սակայն առկա չեն տեղեկություններ առանձնացված ստորաբաժանումների վերաբերյալ:

1. Խնդրում ենք տալ տեղեկատվություն վերը նշվածի վերաբերյալ:

2. Տեղեկատվություն 2020 թվականի ընթացքում աուդիտի ենթական ստորաբաժանումների ցանկը և իրականացվելիք ներքին աուդիտի տեսակը»:

Եվ այսպես, համաձայն Հրավերի 9.5-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր….:

Նույն հրավերի 9.7-րդ կետի համաձայն՝ մինչև սույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Ի պատասխան «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից 24.12.2019թ. ներկայացված գրությանը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը պատասխանել է հետևյալը՝ «Ի պատասխան Ձեր 24.12.2019թ. գրության տեղեկացնում եմ, որ «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով պայմանագրի նախագիծը փոփոխության ենթակա չէ: Նախագիծը պատրաստվել է՝ հիմք ընդունելով «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով ընթացակարգի հրավերը»:

Չստանալով որևէ պարզաբանում 24.12.2019թ. ներկայացված գրությանը՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն 30.12.2019թ. գրություն է ներկայացնում արդեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գշխավոր քարտուղարի փոխարինող Հ. Բատիկյանին, որով մասնավորապես հայտնում է հետևյալը.

«Շնորհակալություն ենք հայտնում, որ ընտրվել ենք թիվ ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ ծածկագրով մրցույթի հաղթող:

18.12.2019թ. մեզ է ներկայացվել ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պայմանագրի նախագիծը: 24.12.2019թ. էլեկտրոնային նամակով գնումների համակարգող Արփինե Կարապետյանից խնդրել ենք Պայմանագրի վերաբերյալ տալ որոշակի տեղեկատվություն: Ի պատասխան մեր կողմից ներկայացված մանակի նշվում է, որ Պայամանագիրը փոփոխության ենթակա չէ: Մենք որևէ փոփոխություն Պայմանագրի չենք առաջարկում:

Խնդրում ենք Պայմանագիրը կնքելուց առաջ տալ որոշակի տեղեկատվություն և ներկայացնել 2020թ. ներքին աուդիտի տարեկան ծրագրի նախնական տարբերակը»:

Այդպես էլ չստանալով ոչ 2020թ. ներքին աուդիտի տարեկան ծրագրի նախնական տարբերակը, և ոչ էլ պարզաբանում վերը նշված հարցման վերաբերյալ՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն 09.01.2020թ. կրկին գրություն է ներկայացնում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, որով հայտնել է՝

«Մեր կողմից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը 24.12.2019թ. և 30.12.2019թ. ներկայացված գրություններով խնդրել էինք ներկայացնել 2020թ. ներքին աուդիտի տարեկան ծրագրի նախնական տարբերակը, սակայն մինչ այսօր ոչ մի տեղեկատվություն մեզ չի ներկայացվել»:

«Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին ներկայացվել է «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով գնման ընթացակարգի 1 չափաբաժնի մասով պայմանագրի նախագիծ՝ այն ստորագրելու համար:

Ուսումնասիրելով «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով հայտարարված մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիրը՝ ակնհայտ է դառնում, որ տեխնիկական բնութագիրը կազմված է ընդհանրական հատկանիշներով՝ հղում կատարելով ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերի պահանջներին և հետևաբար մրցույթով նախատեսված աշխատանքի հստակ ծավալ սահմանված չէ: Հնարավոր չէր, որպեսզի «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն կարողանար իրական պատկերացում կազմել իրականացվելիք աշխատանքների ծավալի վերաբերյալ: Ավելին, Հրավերում նշված են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության թվով 47 առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումները, սակայն առկա չեն տեղեկություններ առանձնացված ստորաբաժանումներում իրականացվելիք աուդիտի վերաբերյալ:

Հենց սրանով է պայմանավորված եղել «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրի թերի լինելը՝ կապված թվով 47 առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ և 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագրի մեզ հասանելի չլինելով, ինչի պատասխանը՝ չնայած մեր գրավոր բազմաթիվ գրություններին, այդպես էլ հնարավորություն չեղավ ստանալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից:

Ի հավաստումն նրան, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիրը թերի է, ոչ ամբողջական, ինչը հնարավորություն չէր տալիս պատկերացում կազմել աշխատանքի իրական ծավալների մասին, առավել ևս կապված թվով 47 առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացվելիք աուդիտի հետ, ինչը հնարավոր չեղավ պարզել նաև 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը մասնակցին չտրամադրելու հետ, կից ներկայացնում ենք «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը: Համեմատություն կատարելու համար սույն դիրքորոշմանը կից ներկայացնում ենք նաև այլ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր, որից պարզ է դառնում, թե աուդիտի ծառայության ձեռքբերման պայմանագրի տեխնիկական բնութագիրը ինչպես պետք է կազմվի, որպեսզի մասնակցի համար կատարվելիք աշխատանքը լինի ամբողջությամբ պարզ և հասկանալի:

2. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան

հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՑ-ԼՕ-2020/42 ընթացակարգը նախաձեռնվել է 12.02.2020թ.՝ հիմքում դնելով «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2020թ. (ստորագրված պայմանագիրը ուղարկվել է մասնակցին 18.12.2019թ., և համապատասխանաբար, այն պետք է ստորագրվեր և ներկայացվեր պատվիրատուին մինչև 09.01.2020թ.) տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը մերժելու հիմքը, ուստի «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի ի հայտ են եկել 10.01.2020թ. և հետևաբար հիմքերը պետք է ներկայացվեր լիազոր մարմին մինչև 17.01.2020թ.:

Այսինքն անհասկանալի պայմաններում «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը մերժելուց միայն մի քանի շաբաթ անց Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության տվյալները ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար: Մասնավորապես, Պատվիրատուի կողմից «Ֆոր էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի տվյալները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարությանը 03.02.2020թ., մինչդեռ Կարգի 45-րդ կետի պահանջների համաձայն՝ պետք է ներկայացվեին մինչև 17.01.2020թ.:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգ /ՍՅ-ԼՕ-2019/233/, որի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 26.11.2019թ.–ին թիվ ՊՆ/02/2630-2019 գրությամբ: Սույն գործի փաստերի համաձայն, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ....:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից թույլ չի տրվել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի "ա" ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:»:

4. <u>ՍՑ-ԼՕ-2020/42 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, որին ներկայացել է միայն «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն, սակայն նոր գնային առաջարկ չի ներկայացրել:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչել «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին:

11.12.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 18.12.2019թ.-ի գրությամբ էլեկտրոնային տարբերակով ծանուցել է Մասնակցին և առաջարկել է կնքել պայմանագիր երկու օրինակից, ինչպես նաև ներկայացնել որակավորման ապահովում պայմանագրի 100 տոկոսի չափով և պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, ծանուցումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հանձնաժողովի 10.01.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, ուստի Մասնակիցը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից և վերջինիս հայտը մերժվել է:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1385-2020 գրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ նեթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը

հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2019/36Ծ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով

հայտ ներկայացրած «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն Հանձնաժողովի 09.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչել «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին:

11.12.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 18.12.2019թ.-ի գրությամբ՝ էլեկտրոնային տարբերակով ծանուցել է Մասնակցին և առաջարկել է կնքել պայմանագիր երկու օրինակից, ինչպես նաև ներկայացնել որակավորման ապահովում պայմանագրի 100 տոկոսի չափով և պայմանագրի ապահովում՝ պայմանագրի գնի 10 տոկոսի չափով, ծանուցումը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Հանձնաժողովի 10.01.2020թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, ուստի Մասնակիցը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից և վերջինիս հայտը մերժվել է:

Անդրադառնալով Մասնակից կողմից բերված այն պատճառաբանությանը, որ «*Ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիրը թերի է, ոչ ամբողջական, ինչը հնարավորություն չէր տալիս պատկերացում կազմել աշխատանքի իրական ծավալների մասին, առավել ևս կապված թվով 47 առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումներում իրականացվելիք աուդիտի հետ, ինչը հնարավոր չեղավ պարզել նաև 2020 թվականի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը մասնակցին չտրամադրելու հետ...»,* Բողոքներ քննող անձը հարկ է համարում, փաստել, որ այդ հանգամանքներն ենթակա էին պարզման մինչև Մասնակցի կողմից պայմանագիր կնքելը, ինչը Մասնակցի կողմից չի իրականացվել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում անդրադառնալ նաև, Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման առարկությունների հիմքում դրված Հանձնաժողովի կողմից Կարգի 45-րդ կետի խախտման փաստին և արձանագրում, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարություն է դիմել 17.01.2020թ.-ին թիվ ՀՎ/32/1219-2020 գրությամբ: Վերջինս

20.01.2020թ.-ին թիվ 26/26-1/544-2020 գրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձը 21.01.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/1338-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է առաջարկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը տալ տեղեկատվություն վերոնշյալ գրությամբ առկա անհամապատասխանությունների վերաբերյալ՝ հստակեցնելով դրանք:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 24.01.2020թ.-ին թիվ 01.1/26-1/903-2020 գրությամբ դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ խնդրելով տրամադրել պահանջվող տեղեկատվությունը:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 03.02.2020թ.-ին ներկայացվել է պահանջվող տեղեկատվության շտկված տարբերակը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 03.02.2020թ.-ի թիվ ՀԲ/32/2614-2020 գրությամբ շտկված տեղեկատվության տարբերակը Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) է ներկայացրել 05.02.2020թ.-ին թիվ 26/26-1/1385-2020 գրությամբ:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից պահպանվել են Կարգի 45-րդ կետի դրույթները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1385-2020 գրությամբ «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/42 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ֆոր Էյ Քնսալթինգ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ